ՔԱՐԱՇԱՄԲԻ ԹԱՍԱԶԵՎ ԲԵՐԱՆՈՎ ՍԱՓՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում և հարակից շրջաններում ուշ բրոնզի դարում լայնորեն տարածված երկարավիզ սափորների մեջ առանձնանում է մի տարբերակ՝ թասանման բերանով սակավաթիվ սափորները։ Մ. թ. ա. II հազ. II կեսի խեցեղենին բնորոշ ձևերի, համաչափությունների, չափերի, պատրաստման եղանակի ու նախշազարդման հետ մեկտեղ սրանք ունեն նաև առանձնահատուկ մի հատկանիշ՝ դրանց վզի վերին մասը լայնացված է և ունի քրեղանի կամ թասի ձև։ Ըստ երևույթին, այդ մասը կիրառական նշանակություն չունի և կրում է դեկորատիվ բնույթ, դուցե համաժամանակյա ծիսական խեցանոթների (կերնոսների) յուրօրինակ արձագանք է[1]։ Դատելով հրատարակված ու թանգարաններում պահվող նյութերից, թասաձև բերանով սափորների ամենավաղ նմուշները հայտնի են Մեծամորից[2], Լոռի-Բերդից[3], Արևելյան Վրաստանի որոշ հուշարձաններից[4] և թվագրվում են ուշ բրոնզի դարով։ Սակայն վերջին տվյալները թույլ են տալիս այս անոթների առաջացման ժամանակը փնտրել բրոնզի դարի ավելի վաղ փուլերում։

Քարաշամբի դամբարանադաշտի հարավային հատվածում պեղված № 45 ա միջին-բրոնզեդարյան դամբարանում (մ. թ. ա. XVIII—XVII դդ.) բազմաթիվ խեցանոթների թվում գտնվեց մի եզակի, կարմիր, անգոբապատ, գունազարդ սափոր (աղ. 1, նկ. 1)։ Այն ունի լայն, հարթ հատակ, գնդաձև իրան ու գլանաձև վիզ, որի վերին մասը թասաձև է՝ կլոր, ներս թեքված կողերով և թույլ արտահայտված շուրթով։ Կարմիր հիմնագույնի վրա սև ներկով արված հարուստ գունազարդումը պատում է ամբողջ սափորը, բացառությամբ ստորին մասի։ Թասանման բացվածքի շուրթի տակով անցնում է համակենտրոն կիսաշրջաններից կազմված զարդագոտի։ Վիզը վերից վար զարդարված է ուղղահայաց, ալիքաձև և ուղիղ գծերի փնջերով ու մանր շրջանակներով։ Իրանը վզից կտրուկ անշատող ուռուցիկ գոտու վրայով անցնում է հորիզոնական ալիքաձև գիծ։ Իրանի վերին մասը պատված է անկյուններով միացած թեք ալիքներով լցված շեղանկյունների երկշար ժապավենով։ Դատարկ մնացած դաշտերը, ինչպես նաև ստորին շարքի շեղանկյունների ծայրերը զարդարված են օղակներով։ Բացի այդ, ժապավենի ստորին մասից «կախված են» վզի նախշազարդումը կրկնող գծերի փնջեր։ Ինչպես վերը նշվեց, նկարագրված անոթը եզակի է, սակայն նրա ձևաբանական (լայն, հարթ հատակ, գնդաձև իրան, գլանաձև վիզ, իրանը վզից անջատող ուռուցիկ գոտի[5] և այլն), տեխնոլոգիական (խեցու բաղադրություն, անոթի տարբեր մասերի միացման եղանակ, կարմիր անգոբ, սև ներկով զարդարում և այլն) և հարդարման (վզի ուղղահայաց գծային զարդարում, ալիքածածկ շեղանկյունների ժապավեններ և այլն) հատկանիշները բազմաթիվ զուգահեռներ ունեն միջին բրոնզի դարի սևան-ուղեբլիկյան տիպի գունազարդ խեցեղենի հետ[6]։

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում ուսումնասիրվող սափորի վերին հատվածում եղած թասաձև մասը։ Այն իր ձևով ու նախշազարդումով կրկնում է Հայաստանի ու Անդրկովկասի միջին բրոնզեդարյան հուշար-

---

1 Հնարավոր է նաև, որ ծիսական նպատակով իրար վրա դրվող անոթների նմանեցումը լինի։

2 Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մրկրտչյան, Է. Ս. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, էջ 28, նկ. 27, Մեծամորի թանգարան, գ. մ. № 17/122։

3 С. Г. Деведжян, Лори-Берд 1, Ереван, 1981, с. 47, табл. XVI_1.

4 К. Н. Пицхелаури, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979, табл. XXX.

5 Այս հատկանիշն ավելի բնորոշ է Թուղքկիրովականյան հնագիտական մշակույթի խեցեղենին (տե՛ս Л. Жоржикашвили, Э. Гогадзе, Памятники Триалети эпохи ранней и средней бронзы, Тбилиси, 1974, табл. 83—702, 85—719, 97—882, 108—772; С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976, с. 102, табл. 83—1,2).

6 К. Х. Кушнарева, Севано-узерликская культура периода средней бронзы на территории Южного Кавказа (Культурное наследние Востока, Л., 1985, с. 89—105).



Գծանկար 1



ԱՇՏԱՐԱԿ II

ձաններից հայտնի լայն հատակով, կլորացող կողերով ու թույլ արտահայտված շուրթով զունազարդ թաս-քրեղաններ, զարդարված շուրթի տակ անցնող համակենտրոն կիսաշրջանների շարքերով[7]։

Պետք է նշել, որ միջին բրոնզեդարյան խեցեղենի մեջ Քարաշամբի սափորի ձևաբանական դուդահեռ հայտնի է Գառնիից, որտեղ հայտնաբերվել է «զորշագույն կրկնակճուճ, վերին թասանման մասով և ուռուցիկ իրանով»։

Վգի վերին մասի դեկորատիվ բացվածքով սափորի մեկ այլ օրինակ է հայտնաբերվել Քարաշամբի № 174 դամբարանում (աղ. I, նկ. 2)։ Եղակի նյութեր պարունակող այս դամբարանը թվագրվում է ուշ բրոնզի դարի վաղ փուլով (մ. թ. ա. XV դ.)[9]։ Ուսումնասիրվող տարբերակին վերաբերող անոթը օժտված է այդ ժամանակաշրջանի խեցեղենին բնորոշ հատկանիշներով։ Այն սև, փայլեցրած սափոր է, ցածր, ուռուցիկ իրանով, զոդավոր ուսերով, որոնք սահուն միանում են բարձր վզին։ Վիզը, դեպի վեր նեղանալով, ավարտվում է փոքր անոթի տեսք ունեցող հատվածով։ Սափորը վերից վար զարդարված է փայլանախշով, իսկ ուսերի վրա խորադիր հորիզոնական գծեր է կրում։ Վերին՝ փոքր անոթի տեսքով դեկորատիվ մասն ունի դուրս ճկված շուրթ և զարդարված է խորադիր ակոսներով։ Ձևով ու հարդարումով այն շատ է նմանվում Վերին Նավերից հայտնի մ. թ. ա. XV դ. վերաբերող կերնոսի և արկղաձև բուրանոթի վրա եղած փոքր անոթներին[10]։

Քարաշամբի ուշ բրոնզի դարի հետագա փուլերին (մ. թ. ա. XIV—XII դդ.) վերաբերող երեք դամբարաններից հայտնաբերվել են թասանման բերանով սափորների մեկական օրինակ (աղ. I, նկ. 3—5)։ Սրանք հարում են Մեծամորի (աղ. II, նկ. 1), Պևրեբիի, Սասունիկի (աղ. II, նկ. 3)[11] վերը նշված նույնատիպ սափորներին։ Բոլորն էլ, կրկնելով հիշված ժամանակաշրջանի երկարավիզ սափորներին բնորոշ ձևերն ու հարդարանքը, վզի վերին մասում դարձյալ թասաձև են։ Այդ մասերը նույնությամբ կրկնում են համաժամանակյա քրեղանների ձևերը՝ լայն և ցածր մերձհատակային մասով, իրանի ստորին մասից դեպի վեր կտրուկ անցումով, ուղիղ կամ ներս թեքված կողերով, դուրս ճկված շուրթով։

Թասանման վերջավորությունները ավելի թույլ արտահայտված ձևով երբեմն հանդիպում են նաև վաղ երկաթի դարի և մ. թ. ա. I հազարամյակի կեսի խեցեղենի վրա, նույնպես կրկնելով իրենց ժամանակին բնորոշ քրեղանների ձևերը [Քարի դլուխ (աղ. II, նկ. 5)[12], Ախմախի[13], Լոռի (աղ. II, նկ. 4)[14], Կալ-քար (աղ. II, նկ. 2)][15]։ Թասաձև կամ քրեղանաձև այս մասերի պատրաստման եղանակը նկարագրված բոլոր անոթների համար հիմնականում նույնն է. դրանք առանձին էին պատրաստվում և ապա միացվում սափորի վզին։

Ուսումնասիրված նյութերի, հատկապես նույն հուշարձանում (Քարաշամբ) մեկը մյուսին փոխարինած հնագիտական մշակույթներին պատկանող սափորների համադրումը բացահայտում է դրանց միջև եղած տիպաբանական ակներև կապ։ Այսպիսով հաստատվում է միջին և ուշ բրոնզի դարի մշակույթների մեջ եղած ևս մեկ կապող օղակ։

Վ. Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

---

7 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, табл. LXXXI; К. Х. Кушнарева, Тазакендский могильник в Армении («Советская археология», 1960, № 1, с. 141—142, рис. 3—7); է. Վ. Խանզադյան, Էլար-Դարանի, Երևան, 1979, դուն. նկ. 1—3։

8 է. Վ. Խանզադյան, Գառնի IV, Երևան, 1969, էջ 64։

9 Պեղումները՝ Ֆ. Մ. Մուրադյանի և հեղինակի։ Նյութերը պատրաստվում են հրատարակման։

10 Հ. Ն. Սիմոնյան, Ուշ բրոնզի դարի պաշտամունքային անոթներ Վերին Նավեր դամբարանադաշտից (Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական դիտական VI կոնֆերանս, Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 55—56)։

11 Սասունիկի պեղումները՝ Ն. Ենգիբարյանի։ Շնորհակալություն ենք հայտնում նյութը տրամադրելու համար։

12 Հ. Ա. Եսայան, նշվ. աշխ., էջ 147—148, աղ. 137a, նկ. 7։

13 Հ. Ա. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր, Երևան, 1969, աղ. LII, նկ. 6։

14 Հ. Գ. Դեվեջյան, նշվ. աշխ., էջ 71, նկ. 30, աղ. XXVIII—1։ Լոռիի տարածքից հայտնի է թասաձև բերանով ևս մեկ սափոր՝ պատահաբար գտնված շինարարական աշխատանքների հետևանքով ավերված դամբարանից (աղ. II, նկ. 6)։ Պահվում է «Էրեբունի» թանգարանում՝ գ. մ. № 111/14։

15 Հ. Ա. Եսայան, նշվ. աշխ., էջ 82, աղ. 68, նկ. 8։